«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/96

ք. Երևան «17» 08 2021թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր՝ Վ. Ուռուտյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հիդրո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Վ. Վարդանյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ընդհանուր շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 120 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները:

3.4.13 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 38201699 (երեսունութ միլիոն երկու հարյուր մեկ հազար վեց հարյուր իննսունինը) ՀՀ դրամ, որից 6366950 (վեց միլիան երեք հարյուր վաթսունվեց հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված պայմանագրի դեպքում տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին է ներկայացնում համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	«Հիդրո» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Շիրվանզադե-5
“Արդշինբանկ» ՓԲԸ	«Ադբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ, Սիսիան մ/ճ
Հ/Հ 247010053103	Հ/Հ 220333330649000
ՀՎՀՀ 01507028	ՀՎՀՀ 09804085
Ռեկտոր ---------- Վ. Ուռուտյան	Տնօրեն ---------- Վ. Վարդանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
«17» 08 2021թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/96 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՀԱԱՀ ՍԻՍԻԱՆԻ Մ/Ճ.-Ի ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավոր արժեք /ՀՀ դրամ/	Ընդհանուր /ՀՀ դրամ/	Ընդամենը /տոկոս/
1	2	3	4		5	6
	1. Հողային աշխատանքներ					
1.	III կարգի (33գ) կավավազային գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ³ շ/տ)(), բարձելով ա/ինքնաթափի վրա	մ³	120	721.6	86592.00	
2.	Տեղափոխում 1կմ լցակույտ	տ	216	1353	292248.00	
3.	Նույնը, V կարգի (6դ) ճալաքարա-կոպճային գրունտի	մ³	80	1353	108240.00	1.45
4.	Գրունտի հետլիցք, էքսկավատորով (0,5մ³ շ/տ)), տոփանմամբ	մ³	20	902	18040.00	
5.	Նույնը, ձեռքով, տոփանմամբ	մ³	46	721.6	33194.00	
6.	Ավելացած գրունտի տեղափոխում բուլդոզերով մինչև 50մ	մ³	170	90.2	15334.00	
	Ընդամենը՝				**553648.00**	
	2. Հիմքեր					
7.	Բազալտե խճով տոփանած նախաշերտ H=20սմ	մ³	17.9	9741.6	174375.00	
8.	Խամքարաբետոնե նախաշերտ ժապավենային հիմքերի տակ B12,5 (M150) դասի բետոնից H=0.9 D=0.8	մ³	80.5	46002	3703161.00	
9.	Միաձույլ ե/բ ժապավենային հիմքեր B20 (M250) դասի բետոնից 0.4-0.7	մ³	31.1	57728	1795341.11	17.02
10.	Ամրան AcI դասի (Φ8)	տ	0.63	460020	289812.98	
11.	Ամրան A500C դասի (Φ16)	տ	1.067	454608	485066.95	
12.	Հորիզոնական հիդրոմեկուսացում շարվող պատերի տակ ցեմենտավազե և հեղուկ ապակու խառնուրդով	մ²	41.0	1353	55473.00	
	Ընդամենը՝				**6503230**	
	3. Միաձույլ երկաթբետոնե շրջանակներ					
13.	Շրջանակների միաձույլ ե/բ սյուներ B25 (M350) դասի բետոնից	մ³	6.07	104632	635116.24	
14.	Ամրան AcI դասի (Φ8)	տ	0.15	460020	69003.00	
15.	Ամրան A500C դասի (Φ18)	տ	0.64	454608	290949.12	5.19
16.	Շրջանակների միաձույլ ե/բ հեծաններ B25 (M350) դասի բետոնից	մ³	5.5	121770	669735.00	.
17.	Ամրան AcI դասի (Φ8)	տ	0.21	460020	96604.20	
18.	Ամրան A500C դասի (Φ18)	տ	0.488	454608	221848.70	
	Ընդամենը՝				**1983256**	
	4. Մետաղական կոնստրուկցիաներ					
19.	Մետաղական խողովակից կանգնակների (սյուների) մոնտաժում	տ	0.376	41492	15601.00	
20.	80x80x6մմ խողովակների արժեքը (27գծմ)	տ	0.376	721600	271322.01	9.97
21.	Մետաղական խողովակներից հեծանների մոնտաժում	տ	1.48	68552	101457.00	
22.	80x80x6մմ խողովակների արժեքը (90գծմ)	տ	1.48	721600	1067968.00	

23.	Սյուների մետաղական բազայի և ներդիրների մոնտաժում	տ	0.12	91102	10932.00	
24.	□=8մմ պողպատաթերթի արժեքը	տ	0.02	721600	14432.00	
25.	□=10մմ պողպատաթերթի արժեքը	տ	0.1	721600	72160.00	
26.	Կավարամածի մոնտաժում 50x40x3մմ խողովակներից	տ	2.848	748660	2132183.96	
27.	Մետաղական կոնստրուկցիաների երկշերտ ներկում հակակոռոզիոն ներկով, նախաներկմամբ	տ	3.94	31119	122609.02	
	Ընդամենը՝				**3808665.0**	
	5. Արտաքին պատեր					
28.	Արտաքին պատերի շարվածք կանոնավոր տուֆ քարից 40սմ հաստությամբ (135մ²)	մ³	54	26879.6	1451497.86	
29.	Շարվածքի ամրանավորում ցանցով Φ6AcI դասի ամրանից	տ	0.07	541200	37884.00	*4.18*
30.	Միաձույլ ե/բ բարավորներ B15 (M200) դասի բետոնից	մ³	0.5	108240	54120.00	
31.	Ամրան AcI դասի (Φ8)	կգ	20	460.02	9200.40	
32.	Ամրան A500C դասի (Φ16)	կգ	100	454.61	45461.00	
	Ընդամենը՝				**1598163**	
	6. Ներքին միջնապատեր					
33.	Ներքին միջնապատերի շարվածք 400x200x200մմ պեմզաբլոկներից	մ³	4.8	23993.2	115167.02	
34.	Շարվածքի ամրանավորում	տ	0.08	69363.8	5549.02	
35.	Ամրան AcI դասի (Φ8)	տ	0.05	460020	23001.00	
36.	Ամրան A500C դասի (Φ12)	տ	0.03	454608	13638.00	
37.	Անցքերի լցափակում մանրախիճ B12,5 (M150) դասի բետոնով	մ³	1.4	54120	75768.00	*0.7*
38.	Ուղղաձիգ և հորիզոնական կարաններ փակում □=2սմ փրփրապլաստե ներդիրներով	մ²	5	703.56	3518.00	
39.	Միաձույլ ե/բ բարավորներ B15 (M200) դասի բետոնից	մ³	0.16	108240	17318.00	
40.	Ամրան AcI դասի (Φ6)	տ	0.01	460020	4600.00	
41.	Ամրան A500C դասի (Φ12)	տ	0.02	454608	9092.00	
	Ընդամենը՝				**267651**	
	7. Տանիք					
42.	Գոլորշամեկուսացում 1 շերտ սոսնձվող իզոգամ ռուբերոիդով	մ²	57	2706	154242.00	
43.	Տանիքի փոքրաչափ ծածկույթներ փոշեներկված ցինկապատ հարթ թիթեղից □=0,55մմ	մ²	60	8118	487080.00	
44.	Մետաղական 80x80x6մմ խողովակներից հիմնակմախքի պատրաստում և մոնտաժում	տ	0.844	721600	609029.98	*7.35*
45.	Մետաղական հիմնակմախքի նախաներկում և երկշերտ ներկում հակակոռոզիոն ներկով	տ	0.844	26158	22077.35	
46.	Տանիքի ծածկույթ ցինկապատ ներկված մետաղակղմինդրից □=0,5մմ	մ²	284	5412	1537008.00	
	Ընդամենը՝				**2809437**	
	8. Հատակներ					
47.	Բազալտե խճով տոփանած նախաշերտ H=20սմ	մ³	44.6	9741.6	434475.36	
48.	Խամքարաբետոնե նախաշերտ ժապավենային հիմքերի տակ B12,5 (M150) դասի բետոնից	մ³	111.5	46813.8	5219738.70	
49.	Ամրանավորված ենթաշերտ B20 (M250) դասի բետոնից	մ³	32	48708	1558656.00	
50.	Ենթաշերտի ամրանավորում Φ10AcI դասի ամրանից 200x200մմ բջիջով	տ	1.54	460020	708430.80	
51.	Ջրամեկուսիչ շերտ քսուքային բիտումով H=3մմ	մ²	73	1262.8	92184.40	*26.91*
52.	Ցեմենտավազե հարթաշերտ H=50մմ	մ²	247	1804	445588.00	
53.	Խճանկար հատակ h=40մմ հղկմամբ, ցեմենտե շրիշակների պատրաստմամբ	մ²	138	6765	933570.00	
54.	Հատակների երեսպատում կերամագրանիտե սալերով, սոսնձով	մ²	56.5	13530	764445.00	
55.	Շրիշակներ կերամագրանիտե սալերից H=10սմ	մ²	4.2	18220.4	76525.68	
56.	Հատակների երեսպատում խեցեսալերով, սոսնձով	մ²	5.2	8749.4	45496.88	

	Ընդամենը՝				**10279111**	
	9. Պատուհաններ և Դռներ					
57.	Մետաղապլաստե, 4 խցիկանի, սպիտակ պրոֆիլներից, ապակեփաթեթով, բացվող պատուհաններ ներառյալ սարքերը	մ²	2.88	36080	103910.40	
58.	Նույնը, չբացվող	մ²	2.88	34276	98714.88	
59.	Ալյումինե, սպիտակ պրոֆիլներից, ապակեփաթեթով, ջերմակամրջակով, արտաքին բացվող դռներ ներառյալ սարքերը	մ²	4.8	135300	649440.00	*3.94*
60.	Մետաղապլաստե, պրոֆիլներից, միափեղկ խուլ դռներ, ներառյալ սարքերը՝ 2 հատ)	մ²	3.36	40590	136382.40	
61.	Մետաղական դարպասների պատրաստում և մոնտաժում	մ²	9	50692.4	456231.60	
62.	Մետաղական դարպասների երկշերտ յուղաներկում նախաներկմամբ	մ²	18	1804	32472.00	
63.	Դարպասի փական	հատ	5	5412	27060.00	
	Ընդամենը՝				**1504211**	
	10. Մեծավանդակների մետաղական ցանցապատ (4 հատ)					
64.	Մեծավանդակի մետաղական ցանցապատի պատրաստում և մոնտաժում (3.7x4.9(h)մ)	տ	1.544	34366.2	53061.41	
65.	50x50x4մմ խողովակի արժեքը	տ	1.184	577280	683499.52	
66.	56x56x4մմ անկյունակի արժեքը (198,8գծմ)	տ	0.24	586300	140712.00	*3.21*
67.	Φ10AcI դասի ամրանի արժեքը	տ	0.12	460020	55202.40	
68.	Մետաղական «ռաբիցա» ցանցի արժեքը (0,13տ)	մ²	72.52	1713.8	124284.78	
69.	Մետաղական ցանցապատի նախաներկում և երկշերտ ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	72.52	1262.8	91578.26	
70.	Ծխնի	հատ	32	1082.4	34636.80	
71.	Փական	հատ	8	5412	43296.00	
	Ընդամենը՝				**1226271**	
	11. Ներքին հարդարման աշխատանքներ					
72.	Պատերի բարելավված սվաղ ցեմենտավազե շաղախով	մ²	375	2525.6	947100.00	
73.	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ	մ²	325	2047.54	665450.50	*10.41*
74.	Կախովի առաստաղ գիպսաստվարաթղթե հարթասալերից □=12,5մմ ջերմամեկուսիչ շերտով հանքային բամբակից □=100մմ գոլորշամեկուսիչ թաղանթով	մ²	65	36350.6	2362789.00	
	Ընդամենը՝				**3975340**	
	12. Արտաքին հարդարման աշխատանքներ					
75.	Պատերի բարելավված սվաղ ցեմենտավազե շաղախով	մ²	240	3256.22	781492.80	
76.	Սվաղված մակերեսների բարելավված ներկում ճակատային ներկով	մ²	240	1353	324720.00	*3.62*
77.	Գետնախարսխի պատերի երեսպատում բազալտե հղված սալերով □=30մմ	մ²	17	16236	276012.00	
	Ընդամենը՝				**1382225**	
	13. Բետոնե ջրհավաք առու					
78.	Բետոնե ջրհավաք առվակի կառուցում B7,5 (M100) դասի բետոնից (2մ³)	մ	30	3508.78	105263.40	*0.63*
79.	Մետաղական ջրընդունիչ ցանցի տեղադրում, ամրացնելով առվակի ներդիր անկյունակներին	տ	0.25	541200	135300.00	
	Ընդամենը՝				**240563**	
	14. Արտաքին հրդեհային աստիճան					
80.	Արտաքին հրդեհային աստիճանի մոնտաժում (63x63x5մմ՝ 12գծմ, պողպատածող Φ16մմ՝ 6,5գծմ)	տ	0.08	721600	57728.00	*0.17*
81.	Մետաղական աստիճանի երկշերտ յուղաներկում	տ	0.08	70356	5628.48	
	Ընդամենը՝				**63356**	
	Ներքին ջրամատակարարման ցանց					*0.47*
82.	Մետաղական խողովակ պատերի վրա, Φ20մմ	մ	10	1353	13530.00	

83.	Փական ջրի Φ20մմ	հատ	1	5412	5412.00	
84.	Պողպատե խողովակների երկշերտ յուղաներկում	մ^2	6	1353	8118.00	
85.	Խրամուղու մշակում ձեռքով III կարգի գրունտում, կողլից	մ^3	4	3030.72	12123.00	
86.	Խրամուղու հետլիցք ձեռքով, կողալիցքի գրունտով	մ^3	4	1407.12	5628.00	
87.	Միացում գործող ջրագծին Φ50մմ	տեղ	1	3788.4	3788.40	
88.	Ջրաչափ Φ15մմ	հատ	1	7216	7216.00	
89.	Ձտիչ Φ15մմ	հատ	1	1172.6	1172.60	
90.	Լվացարանի խառնիչ	հատ	2	5412	10824.00	
91.	Խեցե զուգարանակոնք	հավաքածու	2	32291.6	64583.20	
92.	Խեցե լվացարանակոնք տումբայով	հավաքածու	2	24354	48708.00	
	Ընդամենը՝				**181103**	
	Կոյուղու ներքին ցանց					
93.	Խրամուղու և փոսորակի մշակում ձեռքով III կարգի գրունտում, կողլից	մ^3	10.8	3066.8	33121.00	
94.	Ավազե նախաշերտ և պաշտպանիչ շերտ վրայից H=20սմ	մ^3	1.8	6674.8	12015.00	
95.	Խրամուղու և փոսորակի հետլիցք ձեռքով, կողալիցքի գրունտով, տոփանմամբ	մ^3	5	1515.36	7577.00	
96.	Ավելորդ գրունտի ձեռքով բարձում ա/ինքնաթափի վրա և տեղափոխում 1կմ (5մ^3)	տ	9.5	1407.12	13368.00	
97.	Կոյուղու պոլիէթիլենե խողովակի մոնտաժում խրամուղում Φ100մմ	մ	9	2796.2	25166.00	
98.	Կոյուղու պոլիէթիլենե խողովակների մոնտաժում պատի վրա Φ100մմ, հիդրավլիկ փորձարկմամբ	մ	3	2868.36	8605.00	*0.99*
99.	Նույնը, Φ50մմ Կոյուղու պոլիէթիլենե խողովակների մոնտաժում պատի վրա Φ50մմ, հիդրավլիկ փորձարկմամբ	մ	6	1785.96	10716.00	
100.	Հոսակ Φ100մմ	հատ	2	4870.8	9742.00	
101.	Կոյուղու եռաբաշխիչ Φ100մմ	հատ	2	1966.36	3933.00	
102.	Կոյուղու անկյունակ Φ100մմ	հատ	2	1966.36	3933.00	
103.	Կոյուղու ստուգիչ Φ100մմ (կանգնակի վրա)	հատ	1	1966.36	1966.00	
104.	Կոյուղու դիտահոր հավաքովի ե/բ էլեմենտներից Φ1000մմ	մ^3	1.2	108240	129888.00	
105.	Թուջե մտոց Φ700մմ	հատ	1	117260	117260.00	
	Ընդամենը՝				**377290**	
	Օդափոխություն					
106.	Առանցքային օդամուղ N=0,045կվտ/ժ,	հավաքածու	2	59532	119064.00	*0.31*
107.	Օդահեռացման ճաղավանդակ P150 (150x150)	հատ	2	487.08	974.16	
	Ընդամենը՝				**120038**	
	Էլեկտրաուժային սարքավորումներ					
108.	Բաշխիչ պահարան 12 մոդուլի համար	հավաքածու	1	15334	15334.00	
109.	Ավտոմատ անջատիչ եռաֆազ 40Ա (Legrand կամ համարժեք)	հատ	1	6043.4	6043.40	
110.	Ավտոմատ անջատիչ եռաֆազ 16Ա (Legrand կամ համարժեք)	հատ	5	1984.4	9922.00	
111.	Լուսատու առաստաղի LED լամպերով	հատ	15	11275	169125.00	
112.	էլ.լուսավորության անջատիչ մեկտեղնավոր Titan կամ համարժեք)	հատ	7	1984.4	13890.80	*1.24*
113.	էլ.վարդակ միաֆազ էլ.հողանցող հպակով 16Ա (Titan կամ համարժեք)	հատ	16	1623.6	25977.60	
114.	Ճյուղավորման տուփ 100x100մմ	հատ	8	207.46	1659.68	
115.	Վինիպլաստե խողովակ Φ25մմ	մ	30	360.8	10824.00	
116.	Վինիպլաստե խողովակ Φ20մմ	մ	60	288.64	17318.40	
117.	կB-0,66 3(1x1,5)մմ^2 հաղորդալար	մ	120	523.16	62779.20	
118.	կB-0,66 3(1x2,5)մմ^2 հաղորդալար	մ	90	802.78	72250.20	
119.	կB-0,66 3(1x4)մմ^2 հաղորդալար	մ	30	1082.4	32472.00	
120.	կB-0,66 3(1x6)մմ^2 հաղորդալար	մ	20	1353	27060.00	

121.	Փոսիկների բացում տուփերի համար 60մմ խորությամբ	հատ	32	270.6	8659.20	
	Ընդամենը՝				**473315**	
	Բակային ջրամատակարարման ցանց					
122.	IV կարգի գրունտի մշակում խրամուղում և փոսորակում էքսկավատորով (0,5մ³ շ/տ), բարձելով ա/ինքնաթափի վրա	մ³	15	1082.4	16236.00	
123.	Նույնը, V կարգի գրունտի	մ³	17	1353	23001.00	
124.	Ավազի նախաշերտ խողովակի տակ H=10սմ	մ³	3	6674.8	20024.40	
125.	Ավազի պաշտպանիչ շերտ H=40սմ	մ³	12	6674.8	80097.60	
126.	Պոլիէթիլենե ճնշումային խողովակների տեղադրում խրամուղում , Φ25մմ	մ	100	1398.1	139810.00	*1.57*
127.	Ցանցի փորձարկում քլորացումով Φ25մմ	մ	100	99.22	9922.00	
128.	Փական Φ25մմ	հատ	3	6043.4	18130.20	
129.	Միացում գործող ջրագծին Φ100x25մմ	տեղ	1	9471	9471.00	
130.	Ջրամատակարարման դիտահոր Φ1500մմ	մ³	0.9	110946	99851.40	
131.	Թուջե մտոց Φ700մմ	հատ	1	99220	99220.00	
132.	Հետլիցք խրամուղի տեղի գրունտով, տոփանումով	մ³	17	4870.8	82803.60	
	Ընդամենը՝				**598567**	
	էլեկտրասնուցման մալուխային գծեր և հողանցման կոնտուր					
	Հողանցման կոնտուր					*0.22*
133.	Հողանցման էլեկտրոդ 50x50x5մմ անկյունակից, L=2,5մ	հատ	9	7216	64944.00	
134.	4x40մմ պողպատաշերտ խրամուղում	մ	7.5	2345.2	17589.00	
	Ընդամենը՝				**82533**	
	Տարածքի բարեկարգում					
	1. Հողային աշխատանքներ					
135.	Տարածքի մակերևույթի համահարթեցում բուլդոզերով	մ²	1500	1500	33825.00	*0.45*
	2. Ասֆալտապատման աշխատանքներ					
136.	Ավազակոպճային հիմքի ստեղծում H=15սմ (150մ²)	մ³	27	4059	109593.00	
137.	Խճային հիմքի ստեղծում H=16սմ	մ²	24	1262.8	30305.58	
	Ընդամենը՝				**173723.58**	
	Ընդամենը /տոկոս/					**100%**
	Ընդհանուր /ՀՀ դրամ/*				**38201699.00**	

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ ԱԱՀ-ն՝20%

** Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ, Սիսիան, Շիրվանզադե 7 հասցեում:

***Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կապալառուն իր միջոցներով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
"Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ ---------- Վ. Ուռուտյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հիդրո» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան,
Շիրվանզադե-5
«Ադբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ,
Սիսիան մ/ճ
Հ/Հ 2200333330649000
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն՝ ---------- Վ. Վարդանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 17 » 08 2021թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/96 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀԱԱՀ ՍԻՍԻԱՆԻ Մ/Ճ.-Ի ՈՒՍՈՒՄՆԱԿՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Ընդհանուր շինարարական աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի հաստատումից հետո՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 120 օրացույցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի հաստատումից հետո՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 120 օրացույցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
"Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ ---------- Վ. Ուռուտյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հիդրո» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Շիրվանզադե-5
«Ադբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ, Սիսիան մ/ճ
Հ/Հ 220333330649000
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն՝ ---------- Վ. Վարդանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«17» 08 2021թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/96 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/506	Ընդհանուր շինարարական աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

Պայմանագիրը կնքվելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և վճարման ժամանակացույցը լրացվելու և կնքվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվելու են «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվելու է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ֆինանսական միջոցներ նախատեսվելու տարվա վերջին աշխատանքային օրը:

Վճարման ենթակա գումարները ներկայացվելու են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
"Արդշինբանկ" ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ _____ Վ. Ուռուտյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հիդրո» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան,
Շիրվանզադե-5
«Ադբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ,
Սիսիան մ/ճ
Հ/Հ 220333330649000
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն _____ Վ. Վարդանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

17.08.2021 թվականին կնքված **N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/96** գնման պայմանագրի

ք. Երևան «03» 12 2021թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրաը, ի դեմս ռեկտոր՝ Վ. Ուռուտյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հիդրո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Վ. Վարդանյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 17.08.2021թ. կնքված **N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/96** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.15 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված աշխատանքների ձեռքբերման համար հատկացված **31834749 (երեսունմեկ միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար յոթ հարյուր քառասունինը) ՀՀ դրամ, առանց՝ ԱԱՀ-ի** (ՀՀ փոխվարչապետի 11.10.2021թ-ի N 837-Ա որոշման երկրորդ կետի «1)» ենթակետի համաձայն, «Հիդրո» ՍՊԸ-ի հետ 2021 թվականի օգոստոսի 17-ին կնքված Պայմանագրում նշված գործարքը որակվել է բարեգործական, որով պայմանավորված ազատվել է ԱԱՀ-ից), շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին:

1. Հաստատել Պայմանագրի օրացուցային գրաֆիկը ըստ սույն համաձայնագրի հավելված 1-ի:
2. Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի հավելված 2-ի:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
"Արարատբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ ---------- Վ. Ուռուտյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հիդրո» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան,
Շիրվանզադե-5
«Ադբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ,
Սիսիան մ/ճ
Հ/Հ 220333330649000
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն՝ ---------- Վ. Վարդանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
«17» օգոստոսի 2021թ. կնքված
N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/96 ծածկագրով պայմանագրի
«03» 12 2021թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԻՍԻԱՆԻ Մ/Ճ.Ի ՈՌՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՈՌՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N Ը/Կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Ընդհանուր շինարարական աշխատանքներ	Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից	120 օրացույցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից	120 օրացույցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ _____ Վ. Ուռուտյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հիդրո» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան,
Շիրվանզադե-5
«Ադբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ,
Սիսիան մ/ճ
Հ/Հ 220333330649000
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն՝ _____ Վ. Վարդանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«17» օգոստոսի 2021թ. կնքված
N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/96 ծածկագրով պայմանագրի
«03» 12 2021թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի																
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021-2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													Ընդամենը
			2021թ.	2022թ.												
			XII	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
1	45461100/506	Ընդհանուր շինարարական աշխատանքներ	31834749	31834749	31834749	31834749	31834749	31834749	31834749	31834749	31834749	31834749	31834749	31834749	31834749	**31834749**

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 2022թ-ի դեկտեմբերի 30-ը:
:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
"Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ _____ Վ. Ուռուտյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հիդրո» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան,
Շիրվանզադե-5
«Ադբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ,
Սիսիան մ/ճ
Հ/Հ 220333330649000
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն՝ _____ Վ. Վարդանյան
/ստորագրություն/
Կ.Տ